28-ՐԴ ՆԻՍՏ

22 հոկտեմբերի 1918թ.

Նախագահը թեև հայտարարում է օրակարգի տասներկու հարցերը, սակայն նրանցից ոչ մեկը չի քննվում և նիստը զբաղվում է կառավարության արտակարգ հայտարարության քննությամբ: Դահլիճում ներկա է արտակարգ բազմություն, ներկա են կառավարության բոլոր անդամները:

Նախագահ Սահակյանը նախ կարդում է Ղարաքիլիսայից ստացված երկու հեռագիր ու առաջարկում ոտքի կանգնելով հարգել Ղարաքիլիսայի հազարավոր զոհերի հիշատակը: Սրահը ոտքի է կանգնում:

Մինիստր - Նախագահը պատասխանում է Դաշնակցության ֆրակցիայի այն հարցին, թե ճի՞շտ են, արդյոք, այն լուրերը, համաձայն որոնց թուրքերը պարպում են իրենց գրաված մի քանի գավառները: Հայտնում է, որ 2 օր առաջ հավաստի աղբյուրից հեռագիր է ստացված, որ տաճիկները քաշվում են մինչև Բրեստի դաշնագրի սահմանագիծը: Բայց այդ հեռագիրը պաշտոնական բնավորություն չունի: Եթե այդ շրջաններից հեռանան թուրք զորամասերը, հնարավոր կլինի փախստականների վերադարձը:

Յուր կողմից կառավարությունը միջոցների առաջ կանգ չի առնի, որպեսզի հնարավոր լինի գաղթականների կազմակերպված վերադարձը: Արդեն հարկավոր դիմումը արված է թուրքաց դիվ[անագիտական] ներկայացուցիչ Մամեդ Ալի փաշային:

Այս պատասխանը տալուց հետո անցնում է արտակարգ հայտարարության. հայտնում է, որ մեր տերիտորիայի մի մասը Լոռի-Փամբակի շրջանում գրավված էր տաճկական զորքերով. կառավարությունը մի քանի անգամ պաշտոնական բողոքներ է ներկայացրել թուրքաց կառավարության, ինչպես նաև գերմ[անական] և ավստրիական միսիաներին ու գերմ[անական] կառավարությանը և միշտ մի պատասխան է ստացել, որ գրավումը ժամանակավոր է: Հոկտ. 5-ին Խալիլ փաշան Երևանում հայտնեց մեզ, որ հրաման է ստացել դատարկել վերոհիշյալ տերիտորիան: Անմիջապես մեր և թուրքաց շտաբները գծեցին այդ գործողության ծրագիրը, որը սկսվեց հոկտեմբ. 18-ին ու առանց որևէ միջադեպի շարունակվեց մինչև հոկտ. 21-ը, երբ գիշերվա ժամը 12-ին հեռագիր ստացանք Դրոյից այն մասին, որ «վրացիները ուլտիմատում ներկայացրին՝ դատարկելու համար մեր ստացած շրջանը մինչև Շահալի ու շարժվեցին Կոբերի վրա»: Նա խնդրում է կարգադրություն անել: Կառավարությունը որոշեց չընդունել ուլտիմատումը, չհանձնել Շահալի կայարանը և զինված ուժի դիմելու պարագային դիմադրություն ցույց տալ:

Ստացանք Դիլիջանից ևս երեք հեռագիր. ա. որ մերոնք գրավել են Կոբերը, բ. որ պարպել են Կոբերը գերմանացի լեյտենանտի պահանջմամբ, և գ. որ մերոնք կրկին եկել են Կոբեր:

Մեր կառավարությունը Թիֆլիս ուղարկեց մի հեռագիր Ժորդանիային, որով առաջարկում է զինված ընդհարում չառաջացնել, այլ աշխատել կոնֆլիկտը լուծել խաղաղ ճանապարհով:

Ջամալյանից ստացանք երկու ռադիոհեռագիր. առաջինով հայտնել է, որ ինքը նոտա է ստացել դատարկելու Թիֆլիսի նահանգի այն մասը, որ թողնում են թուրքական զորքերը. բ-ով, որ նա տեսակցել է վրաց. արտ[աքին] գործ[ոց] նախարարի հետ ու վերջինս առաջարկել է թողնել գրավված շրջանները ու ապա բանակցություններ սկսել հարցը խաղաղությամբ լուծելու համար:

Կառավարությունը կանգնած է այն տեսակետի վրա, որ հարցը պիտի լուծել խաղաղ ճանապարհով ու պահել բարիդրացիական հարաբերությունները:

Հայտարարությունից հետո *Ազատյանի* առաջարկությամբ ընդմիջում է հայտարարվում մեկ ժամով. ընդմիջումը տևում է 2½ ժամ, որից հետո *Մինիստր-*

Նախագահը հայտարարում է, որ նոր ստացվեց մի հեռագիր, որը հայտնում է, թե մերոնք բռնել են թուրքերի թողած ամբողջ շրջանը ու դրությունը հանգիստ է:

Ապա քննության է առնվում կառավարության հայտարարությունը. արտահայտվում են բազմաթիվ հռետորներ, որոնք ընդհանրապես շեշտում են, որ կարևոր է կոնֆլիկտը խաղաղությամբ վերջացնել, իսկ եթե վրացիք զինված ուժի կդիմեն՝ դիմադրություն ցույց տալ: Ի վերջո անցնում է դաշնակցական ֆրակցիայի հետևյալ բանաձևը և նիստը փակվում է գիշերվա ժամը 1½-ին. «Լսելով կառավարության հայտարարությունը, Հայաստանի Խորհուրդը հավանություն է տալիս կառավարության բռնած քաղաքականությանն ու արած քայլերին, և առաջարկում է նույն ուղղությամբ շարունակել»:

«Կառավարության լրաբեր», 8 նոյեմբերի 1918թ.